ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվական

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) վերապահվել են հանրային ծառայությունում բարեվարքության ապահովմանն ուղղված մի շարք լիազորություններ և գործառույթներ: Միաժամանակ, հանրային հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքների իրացման նպատակով Հանձնաժողովի լիազորություններից բխող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է և հասանելի դառնում հանրությանն, ինչպես նաև շահագրգիռ կողմերի: Ըստ Օրենքի 6-րդ հոդվածի դրույթների՝ Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաղորդումները, Հանձնաժողովի ընդունած որոշումները և եզրակացությունները, ինչպես նաև իր ներկայացրած առաջարկությունները և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ավարտից հետո՝ երկու ամսվա ընթացքում, Հանձնաժողովը բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ նախորդ տարվա հաղորդումը (այսուհետ՝ Հաղորդում) տեղադրում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Հաղորդմամբ ներկայացվում են Հանձնաժողովի, ինչպես նաև հանրային իշխանության այլ մարմինների գործունեության արդյունքում ձևավորված պրակտիկան և բարեվարքության պահպանմանն ուղղված աշխատանքները:

Հաղորդումը որոշ դեպքերում անդրադառնում է 2025 թվականից առաջ իրականացված աշխատանքներին, երբ դրանք անհրաժեշտ են վերհանված խնդիրների համապարփակ գնահատման համար: Նույն նպատակից ելնելով՝ առանձին դեպքերում հղում է կատարվում նաև 2026 թվականին տեղի ունեցած՝ բարեվարքության համակարգի վիճակի գնահատման տեսանկյունից կարևորություն ներկայացնող գործընթացներին:

Հանձնաժողովը Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ 2023-2024 թվականների հաղորդումների[1], ինչպես նաև գործունեության վերաբերյալ տարեկան[2] և

[1] https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/07/1551.pdf, https://cpcarmenia.am/news/barevarqutyan-hamakargi-vichaki-veraberyal-2024-tvakani-tarekan-haghordum/:
[2] https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/04/1390.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/05/%D4%B1%D4%BA-

կիսամյակային[3] հաղորդումների շրջանակներում ներկայացրել է բարեվարքության միասնական համակարգի կայացման մարտահրավերները և օրենսդրական դաշտի վերլուծությամբ արձանագրված բազմաթիվ բացերը: Ի լրումն՝ Հանձնաժողովի կողմից պարբերաբար իրականացվել են ուսումնասիրություններ նաև բարեվարքության համակարգի տարրերին առնչվող խախտումների քննությունների և պատասխանատվության կառուցակարգերի, էթիկայի հանձնաժողովների գործունեության հետ կապված խոչընդոտների վերաբերյալ, որոնք հրապարակվել են տեղեկանքների տեսքով[4]: Գույքագրված խնդիրների և դրանց հասեցագրման առաջարկների տեղեկանքները Հանձնաժողովի կողմից ներկայացվել են նաև իրավասու մարմիններ՝ օրենսդրության վերանայման շրջանակում դրանց հասցեագրման նպատակով:

Ըստ այդմ՝ սույն հաղորդմամբ Հանձնաժողովը անդրադարձ չի կատարել Հանձնաժողովի կողմից արդեն իսկ հրապարակված հաշվետվությունների և տեղեկանքների ներքո ներկայացված հարցերին, փոխարենը, առավել համապարփակ ներկայացվել են հաշվետու տարում հանրային իշխանության մարմինների պրակտիկան և խախտումների քննությունների տարեկան վիճակագրությունը, ինչպես նաև առանձին գնահատման է արժանացել հանրային ծառայության տեսակների ոլորտային օրենսդրությամբ բարեվարքության համակարգի հետ կապված հարցերը կարգավորող նորմերի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի դրույթների համապատասխանությունը, որի արդյունքները կարող են հիմք ծառայել օրենսդրական ներդաշնակեցման համար:

%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-2024%D5%A9-1.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/05/00-18.pdf:

[3] https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/07/1079.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/07/1253.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/07/1604.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/01/2024-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB-2-%D6%80%D5%A4-%D5%AF%D5%AB%D5%BD%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1%D5%AF-4.pdf:

[4] https://drive.google.com/file/d/1BjbN99w4h8A5ZRYjhcNE0yYvW6khwZTQ/view:

1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄԲԱՊՆԴՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Բարեվարքության համակարգի տարրերի պահպանմանը հետևելու մանդատի շրջանակում Հանձնաժողովի կողմից հաշվետու տարում շարունակվել են Հանձնաժողովի լիազորություններից բխող աշխատանքները: Ընդհանուր առմամբ՝ պահպանվել է բարեվարքության համակարգի տարրերին առնչվող՝ հանրային իշխանության մարմիններից և քաղաքացիներից ստացվող դիմումների, ինչպես նաև վերաբերելի մեդիա հրապարակումների թվի աճի միտումը, արդյունքում նաև՝ դրանց հիման վրա իրականացված ուսումնասիրությունների թվի աճը (ուսումնասիրությունների ընդհանուր քանակը 2 անգամ գերազանցել է 2024 թվականի ցուցանիշը՝ 120-ից հասնելով շուրջ 250-ի): Բացի ուսումնասիրությունների թվի աճից, ինչի արդյունքում Հանձնաժողովը գործնականում հնարավորություն է ունեցել քննելու բարեվարքության համակարգի տարրերին առնչվող իրավախախտումները և իրավասու մարմիններին ներկայացնելու դրանց լուծմանն ուղղված առաջարկներ, հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ապահովել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին խորհրդատվությունների տրամադրումը՝ կապված շահերի բախման իրավիճակների լուծման, ինչպես նաև նվերների հաշվառման գործընթացի կազմակերպման հետ, որոնց թիվն էապես աճել է՝ ի համեմատություն նախորդ տարվա: Մասնավորապես՝

1. Հանձնաժողովը 2025 թվականին շարունակել է վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացում հանրային իշխանության մարմիններին աջակցության տրամադրումը, ոլորտային կանոնագրքերի դիտարկումը, առաջարկների ներկայացումը, ինչպես նաև կանոնագրքերի մշակմանն ուղղված քննարկումներին մասնակցությունը:
2. Ապահովվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման իրավիճակների կանխարգելման և լուծման առնչությամբ խորհրդատվական բնույթի պարզաբանումների և առաջարկությունների տրամադրումը՝ այդպիսով կանխարգելելով շահերի բախման փաստացի իրավիճակների առաջացումը: Ընդ որում՝ էականորեն ավելացել է սույն հիմքով դիմումների թիվը: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վերջիններիս նկատմամբ կիրառելի կանոնագրքի նորմերի առերևույթ խախտումների դեպքերի քննությունները: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի

կանոնների խախտումների առնչությամբ իրականացվել է ավելի քանի 40 ուսումնասիրություն (դիմումների և հրապարակումների հիման վրա), ինչը կրկնակի ավել է եղել 2024 թվականի ցուցանիշից: Միաժամանակ, վարութային գործընթացների և վարքագծի կանոնների կիրառման պրակտիկայի արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ՝ պայմանավորված վարքագծային առանձին նորմերի կիրառելիության բարդությունների հետ, իսկ առանձին նորմերի դեպքում առկա են եղել դրանց մեկնաբանման որոշակիության հետ կապված մարտահրավերներ: Այսպես, օրինակ, կանոնագրքում ներառված են օրինականության սկզբունքից բխող կանոններ, որոնց մի մասը կարող է կիրառելի լինել նաև էթիկական բնույթ չունեցող, այն է՝ կարգապահական բնույթի խախտումների նկատմամբ (օրինակ, պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման), ինչի քննությունը Հանձնաժողովի օրենսդրական մանդատի շրջանակներից դուրս է: Նշվածը առավել խնդրահարույց է, երբ ենթադրյալ խախտումն առնչվում է որևէ մարմնի վարչարարության իրավաչափությանը, որին անդրադառնալու պարագայում Հանձնաժողովը կստանձնի բողոքարկման վերադաս ատյանի դեր, ինչը համահունչ չէ վարքագծի կանոնների պահպանմանը հետևելու Հանձնաժողովի գործառույթից բխող լիազորություններին: Ըստ այդմ, Հանձնաժողովը նշված կանոնները մեկնաբանելիս առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ դրանց շրջանակներում կարող են դիտարկվել միայն էթիկական բնույթ ունեցող ենթադրյալ խախտումները՝ զերծ մնալով բացառապես կարգապահական բնույթի խախտումների կամ այլ մարմինների վարչարարության իրավաչափության քննարկումից:

Բացի այդ, վարքագծի կանոնագրքում ներառված են այնպիսի դրույթներ, որոնց խախտման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է նաև վարչական պատասխանատվություն: Տվյալ պարագայում Հանձնաժողովը չի կարող առանց վարչական իրավախախտումը քննելու իրավասություն ունեցող մարմնի որոշման քննարկել համապատասխան վարքականոնի խախտման առկայությունը: Հակառակ պարագայում կստացվի, որ նույն արարքը կարող է տարբեր վարույթների շրջանակներում զուգահեռաբար քննարկվել երկու մարմինների՝ Հանձնաժողովի և վարչական իրավախախտումը քննելու իրավասությամբ օժտված մարմնի կողմից, որոնք նաև կարող են հանգել տարբեր եզրակացությունների, ինչը խնդրահարույց է կայուն և միասնական իրավական ու ինստիտուցիոնալ պետական համակարգի աշխատանքի ապահովման տեսանկյունից:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովը գույքագրված խնդիրների հաշվառմամբ որոշել է նախաձեռնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի փոփոխություններ և լրամշակում՝ հետագա կիրառումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

3. Իրականացվել է բարեվարքության համակարգի տարրերի ենթադրյալ խախտումների ուսումնասիրությունների և քննության ընթացքում արձանագրված ընթացակարգային օրենսդրական խնդիրների գույքագրում, որի արդյունքները ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարությանը՝ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնման նպատակով:

4. Իրականացվել է մշտադիտարկում ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների և վերջիններիս տեղակալների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների խորհրդականների պաշտոնները զբաղեցնող անձանց շրջանում (ընդհանուր՝ 114 պաշտոնատար անձ)՝ անհամատեղելիության պահանջների և շահերի բախման կարգավորումների պահպանման ստուգման նպատակով:

5. Հանձնաժողովը շարունակել է իրականացնել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման գործընթացը, որի արդյունքում հավաքագրվել և ամփոփվել է 2025 թվականի՝ բարեվարքության համակարգի տարրերի խախտումներին առնչվող՝ հանրային իշխանության մարմինների վիճակագրությունը:

6. Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է հանրային իշխանության մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչներին բարեվարքության համակարգին առնչվող հարցերի շուրջ պարբերական խորհրդատվության տրամադրումը:

7. Զուգահեռաբար իրականացվել են բարեվարքության համակարգի և Հանձնաժողովի գործունեության ոլորտների վերաբերյալ վերապատրաստումները՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար:

8. Գործարկվել է հակակոռուպցիոն կրթության էլեկտրոնային հարթակը և ներդրվել են հակակոռուպցիոն թվային առաջին դասընթացները, որոնք հասանելի են հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող բոլոր անձանց և որոնց միջոցով հաշվետու տարում ապահովվել է մեծ թվով հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստումը:

Թվարկված ուղղություններով իրականացված աշխատանքներին համապարփակ անդրադարձ է արվել Հանձնաժողովի՝ 2025 թվականի տարեկան հաղորդմամբ: Միաժամանակ, հաջորդ գլուխներում մանրամասն ներկայացվում են բարեվարքության ապահովմանն ուղղված՝ հանրային իշխանության այլ մարմինների կողմից իրականացված աշխատանքները, մասնավորապես՝ քննությունները, և այդ համատեքստում գույքագրված խնդիրները, ինչպես նաև հանրային ծառայության տեսակների ոլորտային օրենսդրության գնահատման արդյունքները:

2. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

Համաձայն Օրենքի՝ Հանձնաժողովի լիազորությունն է ապահովել անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարումը և հրապարակումը: Այս համատեքստում՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի N 06-Լ որոշմամբ հաստատված՝ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանական ուղեցույցի պահանջներին համապատասխան՝ Հանձնաժողովը 2025 թվականի դեկտեմբերին մշակել և շրջանառել է էլեկտրոնային հարցաթերթ, որի միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել հանրային իշխանության մարմիններից, այդ թվում՝ համայնքապետարաններից:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչը վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրությունը և նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություններ է տրամադրում Հանձնաժողովին: Միաժամանակ, բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ընթացքում ձևավորված պրակտիկան առանցքային է հանրային իշխանության մարմիններում և լայն իմաստով՝ հանրային ծառայության ամբողջ համակարգում բարեվարքությանն առնչվող խախտումների և դրանց քննության վերաբերյալ վիճակագրություն ձևավորելու համար: Ուստի հարցումը լրացվում է բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից:

Ստորև ներկայացվում են հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, նվերների ընդունման սահմանափակումների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ 2025 թվականի վիճակագրությունն ուսումնասիրելու նպատակով

Հանձնաժողովի կողմից իրականացված հարցման արդյունքները՝ հարցերի և ստացված պատասխանների ամփոփման ձևաչափով:

** 2025 թվականին անցկացված առցանց հարցմանը մասնակցել են պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման թվով 93 մարմիններ: Հարցաթերթերը լրացվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից: 2024 թվականի համեմատությամբ՝ 2025 թվականի հարցմանը մասնակցած գերատեսչությունների թիվը 10-ով ավելացել է, իսկ 2023 թվականի համեմատությամբ՝ 64-ով: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ որակական առումով ստացված տվյալները նախորդ տարիների համեմատությամբ էական բարելավման չեն ենթարկվել:*

1. Արդյո՞ք հաշվետու ժամանակահատվածում հանրային իշխանության մարմնում ներդրվել կամ մշակվել են հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, նվերների ընդունման սահմանափակումների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրության վարման ներքին կանոնակարգ, կամ վիճակագրության վարման այլ մեխանիզմներ (առկայության դեպքում տրամադրել նմուշը կամ հրապարակման հղումը):

Սույն հարցի նպատակն է հավաքագրել տեղեկատվություն հանրային իշխանության մարմիններում հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, նվերների ընդունման սահմանափակումների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրության վարման ներքին կանոնակարգերի, կամ վիճակագրության վարման այլ մեխանիզմների առկայության վերաբերյալ:

Ըստ այդմ՝ հարցմանը մասնակցած գերատեսչությունների ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 90%-ը, չունի վիճակագրության վարման ներքին մեխանիզմներ կամ կառուցակարգեր: Ներկայացված պատասխանների համաձայն՝ թվով երեք գերատեսչությունում վիճակագրության վարման ներքին մեխանիզմները գտնվում են մշակման փուլում: Գերատեսչություններից մեկը նշել է, որ մշակվել է ներքին օգտագործման համար նախատեսված նվերների հաշվառման էլեկտրոնային մատյան: Մեկ այլ գերատեսչությունում վիճակագրությունն իրականացվում է ներքին ծրագրային հնարավորությունների միջոցով ձևավորված ցուցակով, որը հրապարակման ենթակա չէ: Հարցմանը մասնակցած համայնքապետարաններից չորսն արձանագրել է, որ առկա է համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու որոշմամբ հաստատված բարեվարքության պլան: Գերատեսչություններից մեկը նշել է, որ վիճակագրությունը վարվում է կարգապահական տույժեր կիրառելու մասին՝ գերատեսչության ղեկավարի հրամանների ուսումնասիրությունների

միջոցով, որոնց համար հիմք են հանդիսանում գերատեսչության ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի եզրակացությունները:

Ըստ այդմ՝ կարելի է նկատել, որ թեև հարցադրման շրջանակներում ներկայացման ենթակա են եղել բարեվարքության համակարգի տարրերի խախտումներին առնչվող դեպքերի վիճակագրության վարման կամ դրանց գրանցման (հաշվառման) կառուցակարգերի մասին տվյալներ, գործնականում, սակայն, հարցման շրջանակներում որոշ գերատեսչությունների կողմից ներկայացվել են ոչ վերաբերելի տվյալներ, ինչը վկայում է վիճակագրության վարման առանձին գործիքակազմերի բացակայության, ինչպես նաև իրավակարգավորումների վերաբերյալ լրացնող անձանց ոչ պատշաճ իրազեկվածության մասին:

2. Հաշվետու ժամանակահատվածում անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման իրավակարգավորումների խախտման քանի՞ դեպք է արձանագրվել (յուրաքանչյուրն առանձին և հանրագումարային) և ի՞նչ հիմքով (դիմում, մեդիա հրապարակում, ազդարարում):

Հարցմանը մասնակցած 93 գերատեսչություններից 13-ում անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման իրավակարգավորումների խախտման 230 դեպք է արձանագրվել, որից՝ 205-ը վերաբերել է վարքագծի կանոններին, 20-ը՝ շահերի բախման կարգավորումներին, 4-ը՝ անհամատեղելիության պահանջներին, 1-ը՝ այլ սահմանափակումներին: Արձանագրված խախտումների թիվը 2024-ի համեմատությամբ աճել է շուրջ 100-ով, իսկ 2023-ի համեմատությամբ՝ շուրջ 200-ով: Արձանագրված խախտումների հիմք են հանդիսացել որոշ գերատեսչություններում իրականացված օպերատիվ միջոցառումները, ներքին մոնիթորինգի արդյունքները, դիմումներ, զեկուցագրեր:



3. Հաշվետու ժամանակահատվածում նվերների ընդունման սահմանափակումների խախտման քանի՞ դեպք է արձանագրվել և ի՞նչ հիմքով (դիմում, մեդիա հրապարակում, ազդարարում):

Նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքեր հարցված գերատեսչություններում չեն արձանագրվել:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ի տարբերություն բարեվարքության համակարգի այլ տարրերին առնչվող խախտումների քննություններին՝ նվերների ընդունման սահմանափակումների առերևույթ խախտումները ենթակա են քննության բացառապես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Թեև հաշվետու տարում նման քննությունների իրականացման հիմքեր առկա չեն եղել, Հանձնաժողովը նվերների ընդունման սահմանափակումների, մասնավորապես՝ նվերների ընդունման թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրել պաշտոնատար անձանց, առանձին դեպքերում՝ առաջարկելով չընդունել օրենքի իմաստով թույլատրելի չհամարվող նվերները: Ըստ այդմ՝ հաշվետու տարում առերևույթ խախտումներ և հետևապես՝ դրանց քննության անհրաժեշտություն առկա չի եղել:

Ի լրումն՝ Հանձնաժողովն իր կանխարգելիչ մանդատի շրջանակներում իրականացրել է մեդիա մշտադիտարկում և միջոցներ ձեռնարկել, որպեսզի հանրային իշխանության համապատասխան մարմինների ծառայողների և պաշտոնատար անձանց կողմից ստացված՝

հաշվառման ենթակա նվերները սահմանված կարգով և ժամկետում հաշվառվեն՝ համապատասխան ձևաթղթերի լրացման միջոցով:

4. Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, նվերների ընդունման սահմանափակումների, շահերի բախման կարգավորումների խախտումների հիմքով ծառայողական քանի՞ քննություն է իրականացվել և պատասխանատվության ի՞նչ միջոցներ են կիրառվել յուրաքանչյուր դեպքում:

Նախորդ տարիների համեմատ՝ բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով իրականացված քննությունների թիվն, ընդհանուր առմամբ, աճել է: Մասնավորապես՝ 2023 թվականին ներկայացված տվյալների համաձայն՝ հանրային իշխանության մարմիններում իրականացվել է նշված հիմքերով 51 քննություն, մինչդեռ, 2024 թվականի նույն հիմքերով պայմանավորված քննությունների ընդհանուր թիվը կազմել է 143: 2025 թվականին հանրային իշխանության մարմիններում, ըստ ներկայացված տվյալների, իրականացվել է ծառայողական 211 քննություն: Իր հերթին, Հանձնաժողովը հաշվետու ժամանակաշրջանում անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտումների հիմքով հարուցել է թվով 38 վարույթ:

Հարկ է նկատել, որ.

- անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով իրականացվել է ծառայողական 3 քննություն: Գերատեսչություններից մեկում իրականացված ծառայողական քննության արդյունքում հայտարարվել է «խիստ նկատողություն»: Մյուս գերատեսչությունում իրականացված ծառայողական 2 քննությունների նյութերը թողնվել են անհետևանք՝ ծառայողների՝ ծառայությունից ազատվելու պատճառով:
- 2025 թվականին Հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով հարուցել և եզրափակել է 6 վարույթ, որոնցից 3-ը՝ Հանձնաժողովի կողմից իրականացված՝ անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման շրջանակներում: Ըստ այդմ՝ անհամատեղելիության պահանջների խախտման առկայության վերաբերյալ Հանձնաժողովը 3 եզրակացություն է ընդունել՝ դիմելով իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց՝ անհամատեղելիության պահանջների խախտման հարցը քննարկելու առաջարկությամբ: Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով Հանձնաժողովի հարուցած վարույթներից 1-ը եզրափակվել է անհամատեղելիության պահանջների խախտման բացակայության վերաբերյալ եզրակացության ընդունմամբ: Եվս երկու վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ

բացակայության եզրակացության ընդունման անհրաժեշտությունը վերացել է (մի դեպքում՝ պայմանավորված անձի՝ պաշտոնի դադարեցման հանգամանքով, մյուս դեպքում՝ պայմանավորված խախտման վերացման հանգամանքով):

- Այլ սահմանափակումների խախտման հիմքով սույն հարցմանը մասնակցած հանրային իշխանության մարմիններում չի իրականացվել ծառայողական որևէ քննություն, այդուհանդերձ, Հանձնաժողովը հաշվետու տարում քննության է առել այլ սահմանափակման խախտման մեկ դեպք, որն ավարտվել է խախտման առկայության մասին եզրակացության ընդունմամբ:
- Վարքագծի կանոնների խախտման հիմքով հարցմանը մասնակցած գերատեսչություններում իրականացվել է ծառայողական 203 քննություն, ևս 10 վարույթ հարուցել է Հանձնաժողովը: Իրականացված ծառայողական քննություններից 144-ը իրականացվել է նույն գերատեսչությունում: Արդյունքում 63 ծառայող ենթարկվել են «նկատողություն», 37-ը՝ «խիստ նկատողություն», 46-ը՝ «ծառայության դադարեցում», 4 ծառայող՝ «պաշտոնային դրույքաչափի իջեցում», 1 ծառայող՝ «կոչման իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժերի:

  Հաջորդ գերատեսչությունում իրականացված ծառայողական 4 քննության արդյունքում կարգապահական տույժ է կիրառվել 6 ծառայողների նկատմամբ: Անցկացված ծառայողական քննությունների արդյունքում նշանակվել են 2 «զգուշացում», 1 «նկատողություն», 2 «խիստ նկատողություն», 1 «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժերը:

  Մեկ այլ գերատեսչությունում՝ վարքագծի կանոնների խախտման հիմքով իրականացված ծառայողական 21 քննության արդյունքում 11 ծառայող ենթարկվել է «նախազգուշացում», 7 ծառայող՝ «նկատողություն», 2 ծառայող ենթարկվել է «խիստ նկատողություն» և 1 ծառայող՝ «ծառայության դադարեցում» կարգապահական տույժերի: Հաջորդ գերատեսչության ծառայողական 17 քննությունների արդյունքում կիրառվել է 6 «նախազգուշացում», 10 «նկատողություն», 1 «խիստ նկատողություն» կարգապահական տույժեր, մյուս գերատեսչության դեպքում՝ 2 քննության արդյունքում՝ 1-ին՝ «փորձաշրջանը չանցած», 2-րդին՝ «նկատողություն» կարգապահական տույժեր:

  Եվս մեկ գերատեսչությունում վարքագծի կանոնների խախտման հիմքով իրականացված ծառայողական 7 քննության արդյունքում ծառայողներից 1-ը ենթարկվել է «նկատողություն», 1-ը՝ «ծառայությունից արձակում», 1-ը՝ «նախազգուշացում», 3-ը՝

«խիստ նկատողություն» կարգապահական տույժերի, իսկ 1 դեպքում ծառայողական քննությամբ տույժ չի կիրառվել՝ ծառայողի՝ աշխատանքից ազատման հիմքով:
Գերատեսչություններից մեկի դեպքում ծառայողական 3 քննության արդյունքում 3 ծառայողի հայտարարվել է «նկատողություն», երկու այլ դեպքում իրականացված ծառայողական քննության արդյունքում կիրառվել է «խիստ նկատողություն» տույժը:
Եվս երկու գերատեսչությունում իրականացված մեկական քննությունների արդյունքում կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժ: Գերատեսչություններից հաջորդում՝ 1 քննության արդյունքում՝ «ծառայության դադարեցում»: Վարքագծի կանոնների խախտում քննության արդյունքում չի հայտնաբերվել 1 գերատեսչությունում, ըստ այդմ՝ տույժ չի կիրառվել: Տույժ չի կիրառվել նաև վերջին գերատեսչությունում:

Հանձնաժողովը «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքով (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) սահմանված վարքագծի կանոնների խախտումների քննության իր լիազորության շրջանակներում, հաշվետու ժամանակաշրջանում հարուցել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով 10 վարույթ: Հարուցված վարույթներից 5-ը վերաբերել են քաղաքական, 3-ը՝ վարչական, իսկ 2-ը՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց: Հանձնաժողովի կողմից արձանագրված խախտումների առնչությամբ անձինք հանդես են եկել հրապարակային պարզաբանմամբ: 4 դեպքում Հանձնաժողովը ընդունել է վարքագծի կանոնների խախտման առկայության մասին եզրակացություն, ինչի արդյունքներով պաշտոնատար անձինք հանդես են եկել հրապարակային պարզաբանմամբ:

- Շահերի բախման կարգավորումների խախտումների հիմքով հարցմանը մասնակցած հանրային իշխանության մարմիններից միայն երկուսում են իրականացվել ծառայողական քննություններ: Առաջին գերատեսչությունում իրականացվել է ծառայողական 1 քննություն, կիրառվել «խիստ նկատողություն» կարգապահական տույժ, երկրորդ գերատեսչությունում իրականացվել է ծառայողական 4 քննություն, որոնցից 2 դեպքում կարգապահական տույժերից կիրառվել է «նախազգուշացում», մեկական դեպքերում՝ «նկատողություն» և «խիստ նկատողություն»:

Միաժամանակ, Հանձնաժողովը հաշվետու տարում քննության է առել շահերի բախման կարգավորումների խախտման 20 դեպք: Մեկ դեպքում քննությունը հաշվետու

ժամանակաշրջանում անավարտ է մնացել: Եզրափակված քննություններից մեկ դեպքում քննությունն ավարտվել է շահերի բախման իրավիճակի առկայության մասին եզրակացության ընդունմամբ, 1 դեպքում՝ շահերի բախման իրավիճակի բացակայության մասին եզրակացության ընդունմամբ: Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում 2025 թվականին իրականացված քննությունների արդյունքում արձանագրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի պահանջների խախտումներ՝ շահերի բախման իրավիճակում պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Հանձնաժողովին հայտարարություն չներկայացվելու դեպքեր, որոնց հիման վրա հարուցվել են համապատասխան վարչական վարույթներ և վարչական պատասխանատվության ենթարկել համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող 14 անձանց: Եվս երկու դեպքում Հանձնաժողովն ընդունել է վարույթը կարճելու մասին որոշում: Մեկ դեպքում Հանձնաժողովի անդամների ձայների բաշխվածությամբ պայմանավորված՝ որոշում չի կայացվել:

5. 4-րդ հարցում նշված ծառայողական քննություններից քանի՞սն են հաշվետու ժամանակահատվածում եզրափակվել:

Հարցմանը մասնակցած գերատեսչություններում 2025 թվականին եզրափակվել է ծառայողական **211** քննություն, իսկ Հանձնաժողովում հաշվետու տարում եզրափակվել է **36** վարույթ:

6. Արդյո՞ք ծառայողական քննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ ծառայողական քննություն արդյունքում կազմված եզրակացությունը տեղադրվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում:

Իրականացված ծառայողական քննությունների արդյունքում 6 գերատեսչություն է նշել, որ ծառայողական քննություն արդյունքում կազմված եզրակացությունը տեղադրվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում: 2 դեպքում, հաշվի առնելով, որ քննությունն իրականացվել է համայնքային ծառայողների նկատմամբ, տեղեկատվությունը տեղադրվել է համայնքապետարանի պաշտոնական կայքէջում: Եվս 4 դեպքում նշվել է, որ ծառայողները չեն հանդիսացել քաղաքացիական ծառայողներ:

Հարկ է նկատել, որ սույն հարցադրման իմաստով հարթակում տեղադրման են ենթակա միայն քաղաքացիական ծառայողների կողմից խախտումների քննությունների արդյունքները:

7. Հանրային ծառայողների կողմից քանի՞ դեպքում է պատասխանատվության կիրառման վերաբերյալ որոշումը բողոքարկվել և ի՞նչ կարգով:

2023 և 2024 թվականներին առկա են եղել բողոքարկման 2 դեպք: 2025 թվականին ևս գրանցվել է բողոքարկման 2 դեպք՝ երկուսն էլ՝ դատական կարգով:

Ցուցանիշը վկայում է, որ բարեվարքության համակարգին առնչվող խախտումների քննությունների ընդհանուր թիվը նախորդ տարիների համեմատ էապես աճել է: Թեև հարցումը չի ներառում իրականացված ծառայողական քննությունների կարգի վերաբերյալ արդյունքներ, այդուհանդերձ, Հանձնաժողովը տարբեր առիթներով իրականացրած ուսումնասիրությունների շրջանակներում արձանագրել է, որ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման որոշ մարմիններում ոչ պատշաճ քննություններ են իրականացվել: Մասնավորապես, քննություններն իրականացվել են կարգապահական խախտումների քննության ընդհանուր կարգով՝ չնայած դրանք քննելու իրավասությունը վերապահված է բացառապես էթիկայի հանձնաժողովներին: Ուստի այս մոտեցումը բացառում է էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման հիման վրա Հանձնաժողով դիմելու և դրանք բողոքարկելու՝ անձանց օրենսդրական հնարավորությունը:

8. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ծառայողական քննության նշանակումը մերժելու քանի դեպք է գրանցվել, և ի՞նչ հիմքով են դրանք մերժվել:

Հարցմանը մասնակցած գերատեսչություններում ծառայողական քննության նշանակումը մերժելու դեպքեր, ըստ տեղեկատվության, չեն արձանագրվել: Միաժամանակ, հաշվետու տարում Հանձնաժողովը կայացրել է բարեվարքության համակարգի տարրերին առնչվող վարույթների հարուցումը մերժելու մասին 20 որոշում, որոնց համար հիմք են հանդիսացել դիմումների առարկայի՝ Հանձնաժողովի իրավասություններից դուրս լինելը կամ նույն հիմքով որոշումների առկայությունը:

9. Արդյո՞ք բարեվարքության հարցերով կազմակերպիչը խորհրդատվություն ստանալու նպատակով հաշվետու ժամանակահատվածում դիմել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

2025 թվականին հարցմանը մասնակցած 93 գերատեսչություններից 18-ը նշել է, որ դիմել են Հանձնաժողով՝ ինչպես գրավոր, այնպես էլ հեռախոսազանգի միջոցով խորհրդատվություն ստանալու նպատակով: Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ բացի գրավոր ստացված դիմումներից, Հանձնաժողովը, ամենօրյա ռեժիմով և շարունակաբար, բանավոր խորհրդատվություն է տրամադրում տարբեր գերատեսչությունների բարեվարքության հարցերով կազմակերպիչներին և

հանրային ծառայողներին: Խորհրդատվությունները հայցվել են նվերների հաշվառման գործընթացի, հայտարարագրման գործընթացի, շահերի բախման իրավիճակների առնչությամբ:

10. Արդյո՞ք հաշվետու ժամանակաշրջանում բարեվարքության հարցերով կազմակերպչի կողմից հանրային ծառայողներին տրամադրվել է խորհրդատվություն բարեվարքության համակարգի տարրերի պահպանման առնչությամբ (նշել դեպքերի քանակը և հանգամանքները):

Հարցմանը մասնակցած գերատեսչությունների բարեվարքության հարցերով կազմակերպիչներից 58-ը նշել է, որ հաշվետու ժամանակաշրջանում բարեվարքության համակարգի տարրերի պահպանման առնչությամբ խորհրդատվություն չի տրամադրել համապատասխան մարմնի ծառայողներին: Մյուս 35 գերատեսչությունում այդպիսի խորհրդատվություններ տրամադրվել են: Մասնավորապես, տրամադրված խորհրդատվությունները վերաբերել են վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջների պահպանմանը, նվերներ ընդունելու սահմանափակումներին, ինչպես նաև հայտարարագրերի լրացման ընթացքում առաջացած հարցերին և այլն: Ըստ հարցվողների՝ խորհրդատվությունները տրամադրվել են ընդհանուր քննարկումների, անձնական հանդիպումների, աշխատանքային ժողովների ձևաչափով՝ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր:

11. Արդյո՞ք վիճակագրության վարման գործընթացում առկա են եղել իրավական կամ գործառնական խոչընդոտներ:

2023 թվականին իրականացված հարցման շրջանակներում ստացվել էին պատասխաններ, ըստ որոնց՝ առկա խոչընդոտները կապված էին հանդիպող դեպքերի դասակարգման, տեսակավորման մեթոդաբանության բացակայության, ծառայողական պարտականությունների և բարեվարքության նորմերի խախտման տարանջատումների հետ: 2024 թվականին իրականացված հարցմանն ի պատասխան՝ գերատեսչություններից չորսը նշել էին իրավական կամ գործառնական մի քանի խոչընդոտներ: Այդ թվում՝ վիճակագրության վարման օրենսդրական լրացուցիչ կարգավորումների, մեթոդական ուղեցույցների բացակայությունը, գործնականում չբացահայտվող կամ չարձանագրվող խնդրահարույց դեպքերն ու դրվագները, հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, նվերների ընդունման սահմանափակումների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրության վարման միասնական համակարգի բացակայությունը, համայնքային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, նվերների ընդունման սահմանափակումների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրության վարման օրինակելի ներքին

կանոնակարգերի, ուղեցույցների, աշխատանքներին ՏԻՄ ներկայացուցիչների ներգրավման բացակայությունը:

2025 թվականի վիճակագրության հարցման շրջանակներում գերատեսչությունները իրավական կամ գործառնական խոչընդոտներ չեն արձանագրել: Միայն մեկ գերատեսչության կողմից ներկայացվել է առաջարկ՝ վիճակագրության վարման շրջանակներում ավելացնել հարցում՝ ծառայողական քննության՝ փաստական հանգամանքների կամ բավարար ապացույցների բացակայության պատճառով դադարեցման վերաբերյալ տեղեկատվությունը հաշվառելու նպատակով:

Ներկայացված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ արձանագրումները (քննարկվել են նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ 2026 թվականին իրականացված վերապատրաստումների շրջանակներում)՝

- Հաշվետու տարվա վիճակագրական տվյալները և նախորդ տարիների արդյունքների համադրումը ցույց է տալիս, որ 2025 թվականին հիմնականում չեն մշակվել կամ ներդրվել հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, նվերների ընդունման սահմանափակումների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրության վարման ներքին կանոնակարգեր կամ վիճակագրության վարման այլ մեխանիզմներ: Առանձին գերատեսչություններ վիճակագրությունը վարում են գերատեսչության ղեկավարի հրամանների, համայնքների դեպքում՝ համայնքի ղեկավարի/ավագանու որոշմամբ հաստատված պլաններով: Ուստի, վիճակագրական տվյալները մարմինների կողմից, ըստ էության, ամփոփվում են սույն հարցման շրջանակներում Հանձնաժողով ներկայացնելիս:
- Նախորդ տարիների համեմատ՝ բարեվարքության համակարգին առնչվող խախտումների քննությունների ընդհանուր թիվն էականորեն աճել է **(2023 թվականին իրականացվել է 51 քննություն, 2024 թվականին՝ 143, 2025 թվականին՝ 211)**:
- Այդուհանդերձ, տեղեկատվության ամփոփման համատեքստում մարմինների հետ հաղորդակցության շրջանակներում պարզ է դարձել նաև, որ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման **որոշ մարմիններում ոչ պատշաճ քննություններ են իրականացվել: Մի շարք դեպքերում քննություններն իրականացվել են կարգապահական խախտումների քննության ընդհանուր կարգով՝ չնայած դրանք քննելու իրավասությունը վերապահված է բացառապես էթիկայի հանձնաժողովներին:** Այսպիսի պրակտիկան բացառում է էթիկայի հանձնաժողովների

եզրակացությունների վերանայման հիման վրա Հանձնաժողով դիմելու և դրանք բողոքարկելու՝ անձանց օրենսդրական հնարավորությունը, ուստի հարցման արդյունքներով հանրային ծառայողների կողմից պատասխանատվության կիրառման վերաբերյալ որոշումների բողոքարկման դեպքեր գրեթե չեն արձանագրվել: Արձանագրված սակավ դեպքերում բողոքարկումն իրականացվել է դատական կարգով՝ հաշվի առնելով քննությունների յուրահատկությունները:

- Թեև, ընդհանուր առմամբ, առկա չէ էթիկայի հանձնաժողովների ձևավորման բավարար պրակտիկա, այդուհանդերձ, հարցումների արդյունքները վկայում են, որ անգամ այն դեպքերում, երբ բարեվարքությանն առնչվող խախտումների քննություններն իրականացվում են էթիկայի հանձնաժողովների կողմից, առկա են լինում այդպիսի քննությունների նշանակման և անցկացման ընթացակարգային և բովանդակային խախտումներ: Նշվածը, ըստ հարցվածների, պայմանավորվում է այն հանգամանքով, որ գերատեսչություններում ծառայողական քննություն նշանակելու իրավասություն ունեցող անձինք քննության նշանակման հիմքերում թույլ են տալիս այնպիսի սխալներ, որոնք անհնարին են դարձնում էթիկայի հանձնաժողովների կողմից հետագա քննության արդյունավետությունը:
- Միաժամանակ, արձանագրվել են դեպքեր, երբ **Հանձնաժողովի սուբյեկտ հանդիսացող անձանց նկատմամբ հարցմանը մասնակցած մարմիններում նախաձեռնվել են քննություններ, այն դեպքում, երբ նման քննությունների իրականացման իրավասությունը բացառապես Հանձնաժողովինն է:** Թեև քննությունների արդյունքում կայացված որոշումները հանրային պաշտոն զբաղեցնող համապատասխան անձանց կողմից չեն բողոքարկվել կամ վիճարկվել, այնուամենայնիվ, ոչ պատշաճ քննությունների իրականացման դեպքերը վկայում են այն մասին, որ մարմիններում առկա է լուրջ խնդիր՝ կապված իրավակարգավորումների մեկնաբանման և կիրառման հետ:
- Արձանագրվել են նաև դեպքեր, երբ մարմիններում **քննություն է իրականացվել ոչ պատշաճ հիմքով:** Մասնավորապես, տեղական ինքնակառավարման որոշ մարմիններում ծառայողական քննություններ են իրականացվել վարքագծի կանոնների խախտման հիմքով, այնինչ, մարմնի կողմից նկարագրված իրավիճակը վերաբերել է անհամատեղելիության պահանջների խախտմանը: Ըստ այդմ՝ մարմիններում առկա են խնդիրներ նաև բարեվարքության համակարգի տարրերի բովանդակության մեկնաբանման հետ:

- Հարկ է ընդգծել, որ սույն վիճակագրության նպատակն է նաև հավաքագրել և վերլուծել հանրային ծառայության ամբողջ համակարգում բարեվարքության համակարգի վերաբերյալ առկա խնդիրների պատճառները: Նկատի ունենալով, որ նախորդ տարիներին ևս արձանագրվել էին խնդիրներ և իրազեկման բացեր՝ ծառայողական քննությունների իրականացման գործընթացում բարեվարքության համակարգի տարրերի, իրավակարգավորումների մեկնաբանման և կիրառման շրջանակներում, հաշվետու տարում Հանձնաժողովը լայնածավալ աշխատանքներ է տարել իրազեկման բարձրացման առումով: Մեծ թվով հանրային ծառայողներ, այդ թվում՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, մասնակցել են բարեվարքությանն առնչվող թիրախային դասընթացների, որոնք ներառել են նաև բարեվարքության համակարգի տարրերի խախտումների հիմքով քննությունների հետ կապված հարցեր: Թեև, ինչպես վերը նշվեց, աճել է ծառայողական քննությունների թիվը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից իրականացված քննությունների թիվը, այդուհանդերձ, արձանագրված խնդիրները շարունակում են մնալ արդիական: Ուստի այս համատեքստում առաջանում է շահառու մարմինների, ինչպես նաև համապատասխան թիրախային խմբերի հետ հավելյալ աշխատանքների իրականացման անհրաժեշտություն:

Սույն վիճակագրությունը, Հանձնաժողովի գնահատմամբ, հանդիսանում է լրացուցիչ ազդակ՝ վարքագծի ոլորտային կանոնների հստակեցման և դրանց միատեսակ կիրառման ապահովման, էթիկայի հանձնաժողովների ձևավորման և արդյունավետ գործունեության երաշխավորման, ինչպես նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի շարունակական կատարելագործման ուղղությամբ օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակներում փոփոխությունների իրականացման համար:

3. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻՆ

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ վերջիններիս ներկայացվող անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումները, շահերի բախման, նվերների ընդունման կարգավորումները, վարքագծի սկզբունքները նախ և առաջ նախատեսված են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Միաժամանակ, նշյալ օրենքի 3-րդ հոդվածով

սահմանվում են պետական ծառայության տեսակները, որոնց գործունեությունը կարգավորող ոլորտային օրենքներով, ի թիվս այլնի, նախատեսվել են նաև բարեվարքությանն առնչվող կարգավորումներ: Ըստ վկայակոչված հոդվածի՝ Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, հակակոռուպցիոն կոմիտեում ծառայությունը, արտաքին հետախուզության ծառայությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, պրոբացիայի ծառայությունը, հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը, էկոպարեկային ծառայությունը, տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայությունը:

Համապատասխան մարմինները, ելնելով ծառայության առանձնահատկություններից, բացի «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դրույթներից, կարող են ոլորտային օրենքներով նախատեսել լրացուցիչ կարգավորումներ:

Ոլորտային օրենքներով սահմանված՝ հանրային ծառայողների բարեվարքությանն առնչվող նորմերի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված նորմերին համապատասխանության և հնարավոր հակասությունների կամ անհամապատասխանությունների վերհանման նպատակով Հանձնաժողովը հաշվետու տարում իրականացրել է դրանց համապատասխանության գնահատում: Ուսումնասիրվել են նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով պետական ծառայության տեսակների շարքում չընդգրկված՝ «Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքի կարգավորումները, ինչպես նաև «Համայնքային ծառայության մասին» օրենքի վերաբերելի նորմերը:

Ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են ստորև.

1. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2018 թվականի մարտի 23-ին)

Համաձայն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների և պարտականությունների, սոցիալական երաշխիքների, **բարեվարքության համակարգի** և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր

են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են **«Հանրային ծառայության մասին»** օրենքով: Քննարկվող օրենքով բարեվարքության համակարգի տարրերին վերաբերող առանձնահատկություններ չեն սահմանվել: Ըստ այդմ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված բարեվարքության համակարգի տարրերին վերաբերող նորմերը (սահմանափակումները) ամբողջ ծավալով և նույնությամբ կիրառելի են քաղաքացիական ծառայողների նկատմամբ:

2. «Դիվանագիտական ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2001 թվականի հոկտեմբերի 24-ին)

Համաձայն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի՝ **դիվանագիտական ծառայության**, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարությունում **քաղաքացիական ծառայության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով** և ՀՀ աշխատանքային օրենսգրքով, եթե սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չեն:

Միևնույն ժամանակ, նույն օրենքի 44-րդ հոդվածով սահմանվել են դիվանագիտական ծառայության հետ կապված սահմանափակումները, որոնք ներառում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների որոշ դրույթներ:

Այդուհանդերձ, «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված չէ դիվանագետի (դիվանագիտական պաշտոններ և դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք)՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում կարգավիճակով չպայմանավորված պաշտոն, առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու արգելք, սահմանված չեն նաև հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները: Սույն հոդվածի շրջանակում ուղղակիորեն հղում չի կատարվել նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային ծառայողներին ներկայացվող համանման պահանջներին:

Բացի դրանից, նախատեսված չեն նաև Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի) և 7-րդ (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում

է պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում) կետերով նախատեսված այլ սահմանափակումները: Ի լրումն՝ սույն օրենքով դիվանագիտական ծառայության հետ կապված սահմանափակումների խախտման վերացման համար նախատեսված մեկամյա ժամկետը նախատեսված է միայն գույքի հավատարմագրային կառավարման հանձնման համար և չի վերաբերում, օրինակ, անհամատեղելի պաշտոնի կամ աշխատանքի դադարեցմանը: Ինչ վերաբերում է շահերի բախման կարգավորումներին, ապա սույն օրենքով նախատեսված չեն համապատասխան նորմեր:

Ըստ այդմ՝ թեև «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ բարեվարքության համակարգին առնչվող՝ սույն օրենքով չնախատեսված այլ կարգավորումները տարածվում են դիվանագիտական ծառայողների նկատմամբ, առաջարկվում է օրենքի 44-րդ հոդվածի դրույթները համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածների դրույթներին և ձևակերպումներին, կամ դրանք սույն օրենքից հանել՝ նախատեսելով, որ բարեվարքության համակարգի հետ կապված նորմերը սահմանվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով՝ ապահովելու համար նորմերի միատեսակություն:

3. «Մաքսային ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին)

Համաձայն քննարկվող օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ մաքսային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից, «Հանրային ծառայության մասին» օրենքից, մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերից և մաքսային ծառայության հարցերը կարգավորող իրավական այլ ակտերից:

Նույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանվել են մաքսային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Նշված հոդվածով նախատեսվել է, որ, ի լրումն «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ մաքսային ծառայողն իրավունք չունի լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի: Միևնույն ժամանակ, մաքսային ծառայողին արգելվում է մասնակցել «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում մասնակցության դեպքերի:

Այսպիսով, ի լրումն «Հանրային ծառայության մասին» օրենքի սահմանափակումներին, սույն օրենքով նախատեսվել են նաև լրացուցիչ սահմանափակումներ:

4. «Հարկային ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին)

Համաձայն քննարկվող օրենքի 3-րդ հոդվածի՝ ՀՀ հարկային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքից, սույն օրենքից, «Հանրային ծառայության մասին» օրենքից, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից և այլ իրավական ակտերից: Նույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել են հարկային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Նշված հոդվածով նախատեսվել է, որ, ի լրումն «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների, հարկային ծառայողն իրավունք չունի լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի: Հարկային ծառայողին արգելվում է մասնակցել «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում մասնակցության դեպքերի:

Այսպիսով, ի լրումն «Հանրային ծառայության մասին» օրենքի սահմանափակումներին՝ սույն օրենքով նախատեսվել են նաև լրացուցիչ սահմանափակումներ:

5. «Փրկարար ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2005 թվականի հուլիսի 8-ին)

Համաձայն քննարկվող օրենքի 3-րդ հոդվածի՝ փրկարարական ծառայողների բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են փրկարարական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Միևնույն ժամանակ, նույն օրենքի 39-րդ հոդվածով սահմանվել են փրկարարական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Նշված հոդվածով, ի լրումն «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների, փրկարարական ծառայողի նկատմամբ սահմանվել են հավելյալ սահմանափակումներ՝ որպես ներկայացուցիչ հանդես գալու, գործադուլների կազմակերպման և մասնակցության, կուսակցության անդամակցության և խաղային գործունեության հետ կապված:

6. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենք (ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին)

Քննարկվող օրենքով ուղղակի հղում չի կատարվում զինվորական ծառայության հետ կապված հարաբերությունների նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի գործողության վերաբերյալ:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 8-րդ հոդվածով սահմանվել են զինվորական ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, որոնք ներառում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների որոշ դրույթներ: Սույն օրենքով նախատեսված չէ առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու արգելք (անհամատեղելիության պահանջ), ինչպես նաև սահմանված չեն անհամատեղելիության պահանջների խախտման վերացման, դրա ժամկետի, պաշտոնավարման ընթացքում առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերելու արգելքի կամ այդպիսի մասնակցություն ունենալու կամ ժառանգություն ստանալու դեպքում այն հավատարմագրային կառավարման հանձնելու, հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջների վերաբերյալ կարգավորումներ:

Բացի դրանից, նախատեսված չեն նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկվում է իր կողմից), 2-րդ (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի), 6-րդ (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ և 7-րդ (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ

տարվա ընթացքում) կետերով նախատեսված այլ սահմանափակումները: Առկա է նաև անհամապատասխանություն նվերների ընդունման սահմանափակումների առնչությամբ: Մասնավորապես, քննարկվող օրենքի 8-րդ հոդվածով նախատեսվել է, որ զինվորական ծառայողն իրավունք չունի ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ի լրումն՝ առկա չեն նաև շահերի բախմանն առնչվող կարգավորումներ:

Քննարկվող հոդվածով նախատեսվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի սահմանափակումների շրջանակից դուրս լրացուցիչ սահմանափակումներ, այդուհանդերձ, վկայակոչված հոդվածի դրույթները և առկա ձևակերպումները համահունչ չեն «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթներին: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է լրամշակման ենթարկել թվարկված կարգավորումները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը «Հանրային ծառայության մասին» օրենքին, հակառակ դեպքում՝ առկա է կիրառվող սահմանափակումների միջև խզում, ինչը կարող է խոչընդոտել բարեվարքությանն առնչվող նորմերի մեկնաբանման և դրանց խախտումների քննության արդյունավետությանը:

7. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2003 թվականի ապրիլի 11-ին)

Օրենքով ուղղակի հղում չի կատարվում ազգային անվտանգության մարմիններում ծառայության հետ կապված հարաբերությունների նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի գործողության վերաբերյալ:

Քննարկվող օրենքի 43-րդ հոդվածով սահմանվել են միայն ազգային անվտանգության մարմինների ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները, որոնք ներառում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների որոշ դրույթներ, այդուհանդերձ, կարգավորում չեն ստացել անհամատեղելիության պահանջների խախտման վերացման, դրա ժամկետի, պաշտոնավարման ընթացքում առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերելու արգելքի կամ այդպիսի մասնակցություն ժառանգություն ստանալու դեպքում կարգավորումների, հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջների վերաբերյալ հարցերը:

Բացի դրանից, նախատեսված չեն նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի) և 7-րդ (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում) կետերով նախատեսված այլ սահմանափակումները: Նույնական չեն նաև նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող կարգավորումները: Քննարկվող հոդվածով նախատեսվել է, որ ազգային անվտանգության մարմնի ծառայողն իրավունք չունի ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ի լրումն՝ առկա չեն նաև շահերի բախմանն առնչվող կարգավորումներ:

Թեև, նախատեսվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի սահմանափակումների շրջանակից դուրս լրացուցիչ սահմանափակումներ, այդուհանդերձ, վկայակոչված հոդվածի դրույթները և առկա ձևակերպումները համահունչ չեն «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթներին: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է լրամշակման ենթարկել թվարկված կարգավորումները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը «Հանրային ծառայության մասին» օրենքին, հակառակ դեպքում՝ առկա է կիրառվող սահմանափակումների միջև խզում, ինչը կարող է խոչընդոտել բարեվարքությանն առնչվող նորմերի մեկնաբանման և դրանց խախտումների քննության արդյունավետությանը:

8. «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին)

Համաձայն օրենքի 2-րդ հոդվածի՝ ոստիկանությունում ծառայությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով: Ոստիկանությունում ծառայության բարեվարքության համակարգի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» և «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքներով:

Միևնույն ժամանակ, նույն օրենքի 39-րդ հոդվածով սահմանվել են ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Համաձայն նշված հոդվածի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ, 31-րդ և 32-րդ հոդվածներով սահմանված սահմանափակումներից բացի, ոստիկանության ծառայողի նկատմամբ սահմանվել են սույն օրենքով նախատեսված լրացուցիչ սահմանափակումներ: Այդուհանդերձ, առկա չէ հղում շահերի բախմանն առնչվող՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածին, ինչպես նաև սույն օրենքով առանձին նախատեսված չեն շահերի բախմանն առնչվող կարգավորումներ:

Քննարկվող օրենքի 60[18]-րդ հոդվածով սահմանվել են ոստիկանության քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, որոնք ներառում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների որոշ դրույթներ: «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 60[18]-րդ հոդվածով, սակայն, նախատեսված չէ ոստիկանության քաղաքացիական ծառայողի՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն, առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու արգելք (անհամատեղելիության պահանջ): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քաղաքացիական ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում **10 և ավելի տոկոս բաժնեմաս** ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Քաղաքացիական ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ: Հարկ է նշել, որ այս դրույթը հակասում է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածին: Բացի այդ՝ նույնական չեն նաև նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող կարգավորումները: Քննարկվող՝ 60[18]-րդ հոդվածով սահմանվում է, որ ոստիկանությունում քաղաքացիական ծառայողն իրավունք չունի ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ի լրումն՝ առկա չեն նաև շահերի բախմանն առնչվող կարգավորումներ՝ կիրառելի քաղաքացիական ծառայողների նկատմամբ:

Թեև, սույն օրենքով նախատեսվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի սահմանափակումների շրջանակից դուրս լրացուցիչ սահմանափակումներ ոստիկանության ծառայողների համար, այդուհանդերձ, վկայակոչված հոդվածների դրույթները և առկա

ձևակերպումները համահունչ չեն «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթներին:

9. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենք (ընդունվել է 2021 թվականի մարտի 24-ին)

Համաձայն «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

Միևնույն ժամանակ, օրենքով, որպես Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պատասխանատվության հիմքեր, սահմանվել են հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները խախտելը, օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված շահերի բախմանն առնչվող պահանջները չպահպանելը:

Թեև քննարկված դրույթների ձևակերպումները կարող են հետագայում հստակեցվել, այդուհանդերձ, գտնում ենք, որ առկա կարգավորումների մեկնաբանությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները, նվերների ընդունման սահմանափակումները և շահերի բախմանն առնչվող նորմերը կիրառելի են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների նկատմամբ:

10. «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2022 թվականի դեկտեմբերի 23-ին)

Սույն օրենքով ուղղակի հղում չի կատարվում արտաքին հետախուզական գործունեության իրականացման բնագավառում ծագող իրավահարաբերությունների նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի գործողության վերաբերյալ:

Նշված օրենքի 42-րդ հոդվածով սահմանվել են միայն Ծառայության ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները, որոնք ներառում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների որոշ դրույթներ: Միաժամանակ, «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքով նախատեսված չէ առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու արգելք, իսկ բաժնեմասի՝ հավատարմագրային կառավարման հանձնելու պահանջը ամբողջությամբ նույնական չէ «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթի հետ և չի ներառում

բաժնեմասի՝ ժառանգություն ստանալու դեպքերը, ինչպես նաև սահմանված չեն հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները: Սահմանված չէ նաև անհամատեղելիության պահանջի խախտման վերացման ժամկետի հետ կապված դրույթը:

Ի լրումն՝ «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքով ծառայողին արգելվում է համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ: Ընդ որում, այդ կարգավորմամբ, ի տարբերություն «Հանրային ծառայության մասին» օրենքի դրույթների, սահմանված է մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց ավելի լայն շրջանակ՝ ներառելով ծառայողի և վերջինիս ամուսնու տատին և պապին:

Բացի դրանից, նախատեսված չեն նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի) և 7-րդ (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում) կետերով նախատեսված այլ սահմանափակումները:

Բացի այդ՝ նույնական չեն նաև նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող կարգավորումները: Քննարկվող օրենքով սահմանվում է, ծառայության ծառայողն իրավունք չունի ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ի լրումն՝ սահմանված չեն նաև շահերի բախմանն առնչվող կարգավորումներ:

Թեև, նախատեսվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի սահմանափակումների շրջանակից դուրս լրացուցիչ սահմանափակումներ, այդուհանդերձ, վկայակոչված հոդվածի դրույթները և առկա ձևակերպումները համահունչ չեն «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթներին: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է լրամշակման ենթարկել թվարկված կարգավորումները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը «Հանրային ծառայության

մասին» օրենքին, հակառակ դեպքում՝ առկա է կիրառվող սահմանափակումների միջև խզում, ինչը կարող է խոչընդոտել բարեվարքությանն առնչվող նորմերի մեկնաբանման և դրանց խախտումների քննության արդյունավետությանը:

11. «Քրեակատարողական ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2005 թվականի հուլիսի 8-ին)

Համաձայն վերոնշյալ օրենքի 3-րդ հոդվածի՝ քրեակատարողական ծառայողների **բարեվարքության** համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քրեակատարողական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով:

Միևնույն ժամանակ, նույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանվել են քրեակատարողական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Նշված հոդվածով, ի լրումն «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների, քրեակատարողական ծառայողի նկատմամբ սահմանվել են լրացուցիչ սահմանափակումներ՝ կապված դատարանում ներկայացուցչության և կուսակցության անդամակցության հետ: Բացի դրանից, քրեակատարողական ծառայողին արգելվում է մասնակցել «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում մասնակցության դեպքերի:

12. «Պրոբացիայի ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2016 թվականի մայիսի 17-ին)

Օրենքով ուղղակի հղում չի կատարվում պրոբացիայում ծառայության հետ կապված հարաբերությունների նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի գործողության վերաբերյալ: Օրենքի 32-րդ հոդվածով նախատեսվել են պրոբացիայի ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Մասնավորապես՝ ըստ սույն հոդվածի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից բացի, պրոբացիայի ծառայողն իրավունք չունի դատարանում իրականացնելու ներկայացուցչություն, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի, ինչպես նաև նրան արգելվում է մասնակցել «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում մասնակցության դեպքերի: Մեկ այլ՝ 37-րդ հոդվածով սահմանվել է, որ պրոբացիայի ծառայողների վարքագծի

կանոնները խախտելու կամ հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու կամ շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենքով: Թեև սույն դրույթը թույլ է տալիս մեկնաբանել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները, շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումները կիրառելի են պորբացիայի ծառայողների նկատմամբ, առաջարկվում է, ոլորտային օրենքներում միասնական մոտեցման ապահովման նպատակից ելնելով, հետագայում ուղղակի հղում կատարել «Հանրային ծառայության մասին» օրենքին՝ ամրագրելով, որ ծառայության բարեվարքության հետ հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, իսկ սույն օրենքում կարգավորել ոլորտային լրացուցիչ սահմանափակումները:

13. «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին)

Համաձայն վերոնշյալ օրենքի 3-րդ հոդվածի՝ հարկադիր կատարման ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, «Կատարողական վարույթի մասին» օրենքից և **«Հանրային ծառայության մասին»** օրենքից, այլ օրենքներից ու իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

Միևնույն ժամանակ, նույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանվել են հարկադիր կատարողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Նշված հոդվածով սահմանվել է, որ, ի լրումն «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների, հարկադիր կատարողն իրավունք չունի լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի: Հարկադիր կատարումն ապահովող ծառայողին արգելվում է մասնակցել «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում մասնակցության դեպքերի: Սույն օրենքով առանձին չեն կարգավորվում ծառայողի անհամատեղելիության պահանջների, շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների հետ կապված հարաբերությունները: Այդուհանդերձ, էթիկայի հանձնաժողովի գործունեությունը սահմանող 36-րդ հոդվածում նշվել է, որ հարկադիր կատարողի վարքագծի կանոնները խախտելու և (կամ) **հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող** այլ

սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է հարկադիր կատարողների էթիկայի հանձնաժողովը: Թեև սույն դրույթը թույլ է տալիս մեկնաբանել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները, շահերի բախման կարգավորումները կիրառելի են հարկադիր ծառայողների նկատմամբ, առաջարկվում է, ոլորտային օրենքներում միասնական մոտեցման ապահովման նպատակից ելնելով, հետագայում ուղղակի հղում կատարել «Հանրային ծառայության մասին» օրենքին՝ ամրագրելով, որ ծառայության բարեվարքության հետ հարաբերությունները կարգավորումում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, իսկ սույն օրենքում կարգավորել ոլորտային լրացուցիչ սահմանափակումները:

14. «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2018 թվականի հունիսի 13-ին)

Համաձայն քննարկվող օրենքի 33-րդ հոդվածի՝ դատական կարգադրիչների ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որն ստեղծվում և գործում է Դատական դեպարտամենտի կազմում՝ որպես առանձնացված ստորաբաժանում:

Նույն օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Դատական դեպարտամենտում ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են **հանրային ծառայությունը** կարգավորող օրենքներով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ: Սույն օրենքով դատական կարգադրիչներին ներկայացվող սահմանափակումներ (անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, շահերի բախման, նվերների ընդունման հետ կապված (բացառությամբ՝ դատավարության մասնակցից նվեր ստանալու արգելքի) սահմանափակումներ) նախատեսված չեն:

15. «Էկոպարեկային ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2023 թվականի նոյեմբերի 22-ին)

Համաձայն օրենքի 2-րդ հոդվածի՝ էկոպարեկային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքից, սույն օրենքից, **«Հանրային ծառայության մասին»,** «Քաղաքացիական ծառայության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքներից, այլ օրենքներից ու իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ Էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության, էկոպարեկային ծառայողի վարքագծի կանոնները խախտելու կամ էկոպարեկային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Այլ՝ առանձնահատուկ կարգավորումներ սույն օրենքով ևս նախատեսված չեն: Ըստ այդմ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ բարեվարքությանն առնչվող նորմերը կիրառելի են էկոպարեկային ծառայողների նկատմամբ:

16. «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենք (ընդունվել է 2025 թվականի դեկտեմբերի 4-ին)

Օրենքով ուղղակի հղում չի կատարվում Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի և հանձնաժողովում ծառայության հետ կապված հարաբերությունների նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի գործողության վերաբերյալ: Համաձայն նշված օրենքի 40-րդ հոդվածի՝ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների **աշխատանքային հարաբերություններին** վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով, կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

Օրենքի 9-րդ հոդվածով սահմանվել են Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները: Այն է՝ հանձնաժողովի անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, հանդիսանալ որևէ կուսակցության անդամ կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի: Հանձնաժողովի անդամն իր հրապարակային ելույթներում ցուցաբերում է քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

Համաձայն օրենքի 48-րդ հոդվածի՝ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով

նախատեսված սահմանափակումները: Օրենքով, որպես Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի ծառայողի կարգապահական պատասխանատվության հիմք, նախատեսվել է օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը, իսկ, որպես հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցման հիմք, նրա կողմից անհամատեղելիության պահանջները խախտելը:

Բարեվարքության համակարգի մյուս տարրերի (վարքագծի սկզբունքներ և դրանից բխող վարքագծի կանոններ, շահերի բախում, նվերների ընդունման սահմանափակումներ) վերաբերյալ իրավակարգավորումները բացակայում են: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է Հանձնաժողովի անդամի և մարմնի ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները ներդաշնակեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումներին կամ ամրագրել, որ ծառայությունում բարեվարքության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, որպեսզի սահմանափակումները չլինեն հատվածական:

17. «ՀՀ ԱԺ աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2009 թվականի հունիսի 11-ին)

Հարկ է նշել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով, **որպես պետական ծառայության տեսակ, նշված չէ ԱԺ աշխատակազմում պետական ծառայությունը:**

«ՀՀ ԱԺ աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ԱԺ աշխատակազմում պետական ծառայությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական ծառայության տեսակ է: Նույն օրենքով ուղղակի հղում չի կատարվում ԱԺ աշխատակազմում պետական ծառայության հետ կապված հարաբերությունների նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի գործողության վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, նույն օրենքի 26-րդ հոդվածով սահմանվել են պետական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, որոնք ներառում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների որոշ դրույթներ: Նշված օրենքների համապատասխան իրավակարգավորումների համադրումից պարզ է դառնում, որ «ՀՀ ԱԺ աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքով նախատեսված չէ պետական ծառայողի՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն, առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու արգելք

(անհամատեղելիության պահանջ): Բացի այդ՝ նախատեսված է նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում) նախատեսված այլ սահմանափակումը:

Առկա չեն շահերի բախման հետ կապված կարգավորումներ, իսկ նվերների ընդունմանն առնչվող կարգավորումը համահունչ չէ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի դրույթներին: Մասնավորապես, քննարկվող օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ծառայողն իրավունք չունի ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Հարկ է նշել, որ բացի թվարկված տարբերություններից, «Հանրային ծառայության մասին» օրենքում որպես պետական ծառայության տեսակ սույն ծառայությունն ուղղակիորեն չնշելը խնդրահարույց է «Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային ծառայողներին ներկայացվող պահանջների՝ սույն ծառայության ծառայողների նկատմամբ կիրառելիության իմաստով: Ընդ որում՝ ոլորտային օրենքով նախատեսված չեն նաև էթիկայի հանձնաժողովի ձևավորման հետ կապված կարգավորումներ՝ ի տարբերություն ծառայության այլ տեսակների ոլորտային օրենսդրության:

18. «Համայնքային ծառայության մասին» օրենք (ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին)

Համաձայն նշված օրենքի 6-րդ հոդվածի՝ համայնքային ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, **«Հանրային ծառայության մասին»** օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, ինչպես նաև նորմատիվ իրավական այլ ակտերով:

Միևնույն ժամանակ, նույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանվել են համայնքային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, որոնք ներառում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների որոշ դրույթներ: Սույն օրենքով, այդուհանդերձ, նախատեսված չէ համայնքային ծառայողի՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իր

կարգավիճակով չպայմանավորված պաշտոն, առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու արգելք հավատարմագրային կառավարման հետ կապված և կառավարչին ներկայացվող պահանջներ, անհամատեղելիության պահանջի խախտման վերացման ժամկետ:

«Համայնքային ծառայության մասին» օրենքով համայնքային ծառայողին արգելվում է համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ: Ընդ որում, այդ կարգավորմամբ, ի տարբերություն «Հանրային ծառայության մասին» օրենքի դրույթների, սահմանված է մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց տարբերակված շրջանակ, որը չի ներառում խնամիությամբ կապված մյուս անձանց՝ ծառայողի ամուսնու ծնողին, զավակին, եղբորը և քրոջը:

Բացի այդ՝ նախատեսված չէ նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով (հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում) նախատեսված այլ սահմանափակումը: Սահմանված չեն նաև շահերի բախման հետ կապված կարգավորումներ, իսկ նվերների ընդունման սահմանափակումը համահունչ չէ «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթներին:

Ըստ այդմ՝ չնայած «Հանրային ծառայության մասին» օրենքին առկա հղմանը՝ սույն օրենքով սահմանված՝ համայնքային ծառայողներին ներկայացվող սահմանափակումները անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումներին՝ բացառելով առկա անհամապատասխանությունները:

Հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող ոլորտային օրենսդրության շրջանակում բարեվարքությանն առնչվող կարգավորումների ուսումնասիրությունը, այսպիսով, հանգում է հետևյալին.

- Ծառայության ընդամենը մի քանի տեսակների դեպքում նախատեսվել է, որ ծառայությունում բարեվարքության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, իսկ ոլորտային օրենքում տեղ են գտել միայն «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պահանջներից դուրս՝ լրացուցիչ

պահանջներ, ինչն, ընդհանուր առմամբ, չի հանգեցնում նորմերի մեկնաբանման և կիրառման խնդիրների:

- Որոշ ծառայությունների դեպքում, չնայած «Հանրային ծառայության մասին» օրենքին կատարված հղմանը, այդուհանդերձ սահմանվել են ծառայողներին ներկայացվող պահանջներ և սահմանափակումներ, որոնք կամ մասնակի են ներառում «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումները կամ հակասում են վերջինիս ձևակերպումներին:
- Ըստ այդմ՝ հանրային ծառայողներին ներկայացվող՝ բարեվարքության հետ կապված սահմանափակումների կիրառման և մեկնաբանման միասնականությունն ու միատեսակությունը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է ներդաշնակեցնել քննարկված օրենքների կարգավորումները՝ ապահովելով դրանց ամբողջական համապատասխանեցումը «Հանրային ծառայության մասին» օրենքին և վերացնելով առկա բացերը, որոնք գործնականում կարող են խաթարել նորմերի պատշաճ կիրառումը:

Ընդ որում՝ Հաղորդման առաջին հատվածում ներկայացված՝ հանրային իշխանության մարմինների կողմից ներկայացված՝ բարեվարքությանն առնչվող խախտումների քննությունների վիճակագրությունը և գույքագրված խնդիրներն, իրենց հերթին, կարող են պայմանավորված լինել նաև ոլորտային օրենսդրության՝ սույն բաժնում քննարկված անհամապատասխանություններով:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Հանձնաժողովի՝ 2025 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/05/00-18.pdf:*
2. *Հանձնաժողովի՝ 2025 թվականի 2-րդ կիսամյակի գործունեության վերաբերյալ հաղորդում՝ https://shorturl.at/JuyNc:*
3. *Հանձնաժողովի՝ 2025 թվականի 1-ին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաղորդում՝ https://shorturl.at/usL6X:*
4. *Անհամատեղելիության պահանջների պահպանման՝ 2025 թվականի մշտադիտարկման ամփոփում՝ https://shorturl.at/bWk7g*:
5. *Հանձնաժողովի կողմից հաստատված՝ «Շահերի բախման իրավիճակների կառավարման» մեթոդական ուղեցույցը՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/03/123.pdf:*
6. *Հանձնաժողովի կրթական առցանց հարթակ՝ https://elearning.cpcarmenia.am/*: